ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

06 օգոստոսի 2019 թ., ԿԽ-005/19/1

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում արտահերթ ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2019/2020 թթ. ուսուցման ծրագիրը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 19-րդ կետի 10-րդ ենթակետով՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում արտահերթ ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2019/2020 թվականների ուսուցման ծրագիրը, համաձայն հավելվածի:

Նախագահող՝ *Հ. Ասատրյան*

Խորհրդի անդամներ՝ *Հ. Բեդևյան*

Ա. Վարդապետյան

Հավելված

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2019 թվականի
օգոստոսի 6-ի թիվ ԿԽ-005/19/1 որոշման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորների թեկնածուների հավակնորդների 2019-2020թթ. ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիրներ) մասնագիտական պատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, գնահատման եղանակը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ դատավորի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը հետևյալ ոլորտներում.

1) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է հաղորդակցության և բանակցության հմտությունների, սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումների, ներազդման հոգեբանության, դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների և գործունեության գնահատման, դատարանների կողմից միջազգային իրավունքի կիրառման տեսական և գործնական հարցերի, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանը, ինչպես նաև սթրեսի և ժամանակի կառավարման, իրավավերլուծական փաստաթղթերի կազմման և իրավամեկնաբանման ռազմավարության հնարքների, համակարգչային հմտությունների ձևավորմանը:

2) ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏ

- **Քաղաքացիական իրավունք և դատավարություն:** Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է քաղաքացիական իրավունքում և դատավարությունում առկա արդի հիմնահարցերին: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է կորպորոտիվ իրավահարաբերությունների արդի հարցերի, մտավոր սեփականության օբյեկտների և դրանց իրավական պաշտպանության առանձնահատկությունների, սեփականության և այլ գույքային իրավունքների, գործարքների, ժառանգական իրավունքի, պարտավորական իրավունքի, միջազգային մասնավոր իրավունքի, արժեթղթերի իրավական կարգավորման առանձնահատկությունների, քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հիմնահարցերի, դրանց կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների և արդի այլ հիմնահարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը և կարողությունների ձևավոր-

մանը, ինչպես նաև դատական նիստի վարման, վերաբերելի իրավունքի վերհանման, վերլուծության և կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը:

- **Քրեական իրավունք և դատավարություն:** Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքում և դատավարությունում առկա արդի հիմնահարցերին: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է հանցագործությունների որակման հիմնախնդիրների, արարքի հանցավորությունը, քրեական պատասխանատվությունը և պատիժը բացառող հանգամանքների, պատժի ինստիտուտին և պատիժ նշանակելուն առնչվող հարցերի, քրեական դատավարության տարբեր փուլերում ծագող հիմնախնդիրների, դատական քննության անցկացման և դատական ակտի մշակման հմտությունների, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնահարցերի, դրանց կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի և ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների ու արդի այլ հիմնահարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը, ինչպես նաև դատական վարույթ իրականացնելու, վերաբերելի իրավունքի վերհանման, վերլուծության և կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ու կարողությունների ձևավորմանը:
- **Վարչական իրավունք և դատավարություն:** Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է վարչական իրավունքի և դատավարության արդի հարցերին: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է վարչարարության, վարչական վարույթի, վարչական պատասխանատվության ինստիտուտների, վարչական դատավարության ընդհանուր դրույթների, հայցային վարույթին և հատուկ վարույթներին վերաբերող արդի հարցերի, ինչպես նաև վարչական օրենսդրության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների, վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի և ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը և կարողությունների ձևավորմանը, դատական վարույթ իրականացնելու, վերաբերելի իրավունքի վերհանման, վերլուծության և կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը:

4. Գիտական աստիճան ունեցող հավակնորդների համար գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցումն ընդգրկում է Հատուկ մասնագիտական ոլորտի դասընթացները և փորձաշրջանը:

5. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:

6. Լսարանային ուսուցումն իրականացվում է ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլների հիման վրա: Հատուկ մասնագիտական մոդուլում ընդգրկված դասընթացները նախատեսված են միայն տվյալ մասնագիտացմամբ Ունկնդիրների համար:

7. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ՝ ըստ քաղաքացիաիրավական, քրեաիրավական և վարչաիրավական մասնագիտացումների: Փորձաշրջանի մեկ օրվա տևողությունը 10 ակադեմիական ժամ է: Փորձաշրջանի ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 720 ակադեմիական ժամ: Փորձաշրջանի ավարտին յուրաքանչյուր Ունկնդիր գնահատվում է՝ դրական կամ բացասական:

8. Ուսումնառության ընդհանուր ժամաքանակը յուրաքանչյուր մասնագիտացմամբ Ունկնդիրների համար սահմանվում է 1026 ակադեմիական ժամ:

9. Ուսումնառության տևողությունը սահմանվում է 7 ամիս 3 շաբաթ (2019 թվականի սեպտեմբերի 9-ից 2020 թվականի մայիսի 4-ը)՝ ներառյալ 4 ամիս տևողությամբ փորձաշրջանը (2019 թվականի դեկտեմբերի 23-ից 2020 թվականի մայիսի 4-ը):

II. Ուսումնառության ժամանակային կառուցվածքը
(քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ ունկնդիրների)

	Դասընթացների ժամաքանակ	Քննաշրջանի ժամաքանակ	Փորձաշրջանի ժամաքանակ	Ընդհանուր ժամաքանակ
Ուսուցման 1-ին հատված (սեպտեմբերի 9-հոկտեմբերի 25)	**120 ժամ** (9 դասընթաց) (սեպտեմբերի 9-հոկտեմբերի 18)	**2 ժամ** (1 քննություն) (հոկտեմբերի 21-25)	—	**122 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (հոկտեմբերի 28-դեկտեմբերի 13)	**80 ժամ** (1 դասընթաց) (հոկտեմբերի 28-դեկտեմբերի 6)	**2 ժամ** (1 քննություն) (դեկտեմբերի 9-13)	—	**82 ժամ**
Ուսուցման 3-րդ հատված (դեկտեմբերի 16-փետրվարի 7)	**100 ժամ** (1 դասընթաց) (դեկտեմբերի 16-հունվարի 31)	**2 ժամ** (1 քննություն) (փետրվարի 3-7)	**120 ժամ** (դեկտեմբերի 23-փետրվարի 7)	**222 ժամ**
Ուսուցման 4-րդ հատված (փետրվարի 10-մայիսի 4)	—	—	**600 ժամ** (փետրվարի 10-մայիսի 4)	**600 ժամ**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**300 ժամ**	**6 ժամ**	**720 ժամ**	**1026 ժ**

III. Ուսումնառության ժամանակային կառուցվածքը
(քրեաիրավական մասնագիտացմամբ ունկնդիրների)

	Դասընթացների ժամաքանակ	Քննաշրջանի ժամաքանակ	Փորձաշրջանի ժամաքանակ	Ընդհանուր ժամաքանակ
Ուսուցման 1-ին հատված (սեպտեմբերի 9-հոկտեմբերի 25)	**120 ժամ** (9 դասընթաց) (սեպտեմբերի 9-հոկտեմբերի 18)	**2 ժամ** (1 քննություն) (հոկտեմբերի 21-25)	—	**122 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (հոկտեմբերի 28-դեկտեմբերի 13)	**80 ժամ** (1 դասընթաց) (հոկտեմբերի 28-դեկտեմբերի 6)	**2 ժամ** (1 քննություն) (դեկտեմբերի 9-13)	—	**82 ժամ**
Ուսուցման 3-րդ հատված (դեկտեմբերի 16-փետրվարի 7)	**100 ժամ** (1 դասընթաց) (դեկտեմբերի 16-հունվարի 31)	**2 ժամ** (1 քննություն) (փետրվարի 3-7)	**120 ժամ** (դեկտեմբերի 23-փետրվարի 7)	**222 ժամ**
Ուսուցման 4-րդ հատված (փետրվարի 10-	—	—	**600 ժամ** (փետրվարի 10-	**600 ժամ**

մայիսի 4)			մայիսի 4)	
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**300 ժամ**	**6 ժամ**	**720 ժամ**	**1026 ժ**

IV. Ուսումնառության ժամանակային կառուցվածքը
(վարչաիրավական մասնագիտացմամբ ունկնդիրների)

	Դասընթացների ժամաքանակ	**Քննաշրջանի ժամաքանակ**	**Փորձաշրջանի ժամաքանակ**	**Ընդհանուր ժամաքանակ**
Ուսուցման 1-ին հատված (սեպտեմբերի 9-հոկտեմբերի 25)	**120 ժամ** (9 դասընթաց) (սեպտեմբերի 9-հոկտեմբերի 18)	**2 ժամ** (1 քննություն) (հոկտեմբերի 21-25)	—	**122 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (հոկտեմբերի 28-դեկտեմբերի 13)	**80 ժամ** (1 դասընթաց) (հոկտեմբերի 28-դեկտեմբերի 6)	**2 ժամ** (1 քննություն) (դեկտեմբերի 9-13)	—	**82 ժամ**
Ուսուցման 3-րդ հատված (դեկտեմբերի 16-փետրվարի 7)	**100 ժամ** (1 դասընթաց) (դեկտեմբերի 16-հունվարի 31)	**2 ժամ** (1 քննություն) (փետրվարի 3-7)	**120 ժամ** (դեկտեմբերի 23-փետրվարի 7)	**222 ժամ**
Ուսուցման 4-րդ հատված (փետրվարի 10-մայիսի 4)	—	—	**600 ժամ** (փետրվարի 10-մայիսի 4)	**600 ժամ**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**300 ժամ**	**6 ժամ**	**720 ժամ**	**1026 ժ**

V.ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	JC-G-001-19	Հաղորդակցության և բանակցության հմտություններ	10
2.	JC-G-002-19	Սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները	10
3.	JC-G-005-19	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում	20
4.	JC-G-007-19	Դատարանների կողմից միջազգային իրավունքի կիրառման տեսական և գործնական հարցեր	20
5.	JC-G-008-19	Ներազդման հոգեբանություն	10
6.	JC-G-014-19	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր	10
7.	JC-G-018-19	Սթրեսի և ժամանակի կառավարում	10

8.	JC-G-021-19	Իրավավերլուծական փաստաթղթերի կազմում և իրավամեկնաբանման ռազմավարության հնարքներ	10
9.	JC-G-028-19	Համակարգչային հմտություններ	20
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**120**

2. Հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլներ

2.1. Քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
10.	JC-C-022-19	Քաղաքացիական իրավունքի արդի հարցեր	80
11.	JC-C-029-19	Քաղաքացիական դատավարության արդի հարցեր	100
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**180**

2.2 Քրեաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
12.	JC-Q-002-19	Քրեական իրավունքի արդի հարցեր	80
13.	JC-Q-003-19	Քրեական վարույթի արդի հարցեր	100
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**180**

2.3 Վարչաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
14.	JC-A-002-19	Վարչական իրավունքի արդի հարցեր	80
15.	JC-A-012-19	Վարչական դատավարության արդի հարցեր	100
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**180**

VI. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. JC-G-001-19. Հաղորդակցության և բանակցության հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է Ունկնդիրներին իրենց պաշտոնեական գործառույթների արդյունավետ իրականացման կարևոր գրավական հանդիսացող հաղորդակցությունների վերաբերյալ բազային գիտելիքների ձեռքբերման համար: Նշվածը թույլ կտա ձևավորել կառուցողական փոխհարաբերություններ և կանխել հնարավոր ռիսկերը պաշտոնեական և ոչ-պաշտոնեական գործունեության ընթացքում:

Դասընթացը ներառում է հաղորդակցության էությունը և տեսամեթոդական հիմքերը, հաղորդակցության արգելքները և դրանց հաղթահարման ուղիները, մանիպուլյացիան և հակամանիպուլյացիայի միջոցները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-002-19, JC-G-005-19, JC-G-007-19, JC-G-008-19, JC-G-014-19, JC-G-018-19, JC-G-021-19, JC-G-028-19 դասընթացների հետ համատեղ:

2. JC-G-002-19. Սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները

Դասընթացը պայմանավորված է սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության ոլորտում Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է սահմանադրական իրավունքի գիտության զարգացման արդի միտումները, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության սահմանադրական հիմունքների (դատական իշխանության մարմինների համակարգի կազմակերպման և գործունեության կարգի), մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների, դրանց սահմանափակումների, սահմանադրական արդարադատության (սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի, սահմանադրական դատարանի և պետական իշխանության այլ մարմինների փոխհարաբերությունների, սահմանադրական դատարանի լիազորությունների, դրանց իրականացման կարգի) վերաբերյալ հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-19, JC-G-005-19, JC-G-007-19, JC-G-008-19, JC-G-014-19, JC-G-018-19, JC-G-021-19, JC-G-028-19 դասընթացների հետ համատեղ:

3. JC-G-005-19. Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և գործունեության գնահատում

Դասընթացը պայմանավորված է դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների և գործունեության գնահատման ոլորտում նոր իրավակարգավորումներով սահմանված չափանիշների ներկայացման, այս ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման և կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդառնան դատավորի էթիկայի կանոնները, գործունեության գնահատման չափանիշները, դատավորի վարքագծի կանոններն ինչպես ի պաշտոնե գործելիս, այնպես էլ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում, հատուկ անդրադարձ կկատարվի դատավորի ինքնաբացարկի հիմքերին, դրանց կիրառման առանձնահատկություններին, ինչպես նաև զանվածային լրատվության միջոցների հետ և այլ շփումներում դատավորի վարքագծի առանձնահատկություններին:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-19, JC-G-002-19, JC-G-007-19, JC-G-008-19, JC-G-014-19, JC-G-018-19, JC-G-021-19, JC-G-028-19 դասընթացների հետ համատեղ:

4. JC-G-007-19. Դատարանների կողմից միջազգային իրավունքի կիրառման տեսական և գործնական հարցեր

Դասընթացը պայմանավորված է միջազգային իրավունքի նորմերի կիրառման վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է միջազգային իրավունքի և ներպետական իրավունքի հարաբերակցության, միջազգային պայմանագրերի մեկնաբանման և անմիջական կիրառման, միջազգային սովորութային իրավունքի, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած նորմերի ու սկզբունքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանների կողմից կայացված դատական ակտերի կիրառման հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-19, JC-G-002-19, JC-G-005-19, JC-G-008-19, JC-G-014-19, JC-G-018-19, JC-G-021-19, JC-G-028-19 դասընթացների հետ համատեղ:

5. JC-G-008-19. Ներազդման հոգեբանություն

Դասընթացն անհրաժեշտ է ներազդման հոգեբանական հիմքերն իմանալու, ներազդման և մանիպուլյացիայի տեխնիկաներին ծանոթանալու և դրանցից պաշտպանվելու համար:

Դասընթացը ներառում է ներազդումը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, հոգեբանական ներազդման էությունը, մարդու հոգեկանը և սոցիալ-հոգեբանական ազդեցությունը, ներազդման նպատակները, հոգեբանական անվտանգության խնդիրը ժամանակակից հասարակության մեջ, ներազդման միջոցները և տեսակները, քաղաքակիրթ հոգեբանական ներազդում, ներազդման սկզբունքները, մեխանիզմները և ավտոմատիզմները, մանիպուլյացիայի սահմանումը, դրսևորումները և տեսակները, խմբի ազդեցությունը անձի վրա, խմբային ներազդման օրինաչափությունները և եղանակները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-19, JC-G-002-19, JC-G-005-19, JC-G-007-19, JC-G-014-19, JC-G-018-19, JC-G-021-19, JC-G-028-19 դասընթացների հետ համատեղ:

6. JC-G-014-19. Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթների, դրա դեմ տարվող պայքարի ընդհանուր վիճակի, հակակոռուպցիոն պայքարի իրավական (ներպետական և միջազգային, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և ԵԽ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) հանձնարարականները), և ինստիտուցիոնալ շրջանակների (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԳՐԵԿՈ-ի և ՄԱՆԻՎԱԼ-ի գործունեությունը), համապատասխան այլ շահագրգիռ կողմերի (հասարարական կազմակերպությունների, ՋԼՄ-երի) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-19, JC-G-002-19, JC-G-005-19, JC-G-007-19, JC-G-008-19, JC-G-018-19, JC-G-021-19, JC-G-028-19 դասընթացների հետ համատեղ:

7. JC-G-018-19. Սթրեսի և ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է դատավորների մոտ հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու, ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մաս-

նագիտական կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ինքնակարգավորման և ինքնակառավարման գործընթացների հոգեբանական բնութագիրը,
- սթրեսի հիմքերը և տեսակները,
- ինքնակարգավորման տեսական մոտեցումները,
- սթրեսի կառավարման մեթոդների ընդհանուր բնութագիրը և վերլուծությունը,
- սթրեսի կառավարումը և ինքնագիտակցությունը,
- ինքնաճանաչումը, ինքնավերահսկումը և ինքնակազմակերպումը սթրեսի կառավարման գործընթացում,
- ինքնակարգավորման մեխանիզմները և մակարդակները,
- մարդկային մարմինը որպես էներգետիկ համակարգ,
- ինքնակարգավորման ձևերի դասակարգումը մկանների թուլացման հիմքի վրա, ռելաքսային վիճակի համակարգը, ֆունկցիաները, մեխանիզմները:

Դասընթացը ներառում է նաև՝

- ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը,
- ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ,
- ժամանակի տեսակները,
- ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները,
- մարդը և ժամանակը ճգնաժամային իրավիճակներում,
- ժամանակի հիմնական «թակարդները»,
- ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծությունը, ժամանակաչափումը,
- ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները,
- գլոբալ նպատակների որոշումը,
- երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը,
- կարճաժամկետ և օպերատիվ պլանները,
- նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով,
- Էյզենհաուերի սկզբունքը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-19, JC-G-002-19, JC-G-005-19, JC-G-007-19, JC-G-008-19, JC-G-014-19, JC-G-021-19, JC-G-028-19 դասընթացների հետ համատեղ:

8. JC-G-021-19. Իրավավերլուծական փաստաթղթերի կազմում և իրավամեկնաբանման ռազմավարության հնարքներ

Դասընթացը պայմանավորված է համոզիչ իրավական վերլուծությունների կատարման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտում կարողությունների և հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- իրավավերլուծական ռազմավարությունների ընտրության հետ կապված գործնական հարցերը,
- օրենսդրական և նախադեպային տեքստերի հետ աշխատանքում իրավամեկնաբանողական հնարքների կիրառման հետ կապված գործնական հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-19, JC-G-002-19, JC-G-005-19, JC-G-007-19, JC-G-008-19, JC-G-014-19, JC-G-018-19, JC-G-028-19 դասընթացների հետ համատեղ:

9. JC-G-028-19. Համակարգչային հմտություններ

Դասընթացը պայմանավորված է Ունկնդիրներին համակարգչային ծրագրերով աշխատելու, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և իրավական տեղեկատվական որոնման համակարգերից օգտվելու գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև այդ գիտելիքների ընդլայնման շարունակական զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է «Microsoft Office Word» և «Microsoft Office Excel» ծրագրերից առավել արդյունավետ օգտվելու կարողությունները, ինչպես նաև իրավական-տեղեկատվական-որոնողական՝ «http://www.arlis.am/», «http://datalex.am/», «https://www.e-draft.am/», «https://hudoc.echr.coe.int/» և այլ համացանցային ռեսուրսներից օգտվելու ունակություններն ու համակարգչից օգտվելու այլ հմտություններ:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ JC-G-001-19, JC-G-002-19, JC-G-005-19, JC-G-007-19, JC-G-008-19, JC-G-014-19, JC-G-018-19, JC-G-021-19 դասընթացների հետ համատեղ:

10. JC-C-022-19. Քաղաքացիական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է օրենսդրական զարգացման արդյունքում քաղաքացիաիրավական ոլորտում ներդրված նոր ինստիտուտների, փոփոխության ենթարկված դրույթների, դրանց կիրառման վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումների, քաղաքացիական իրավունքի այլ նորմերի կիրառման առանձնահատկությունների, դրա արդյունքում բացահայտված խնդրահարույց և վիճելի հարցերի վերաբերյալ տեսական ու պրակտիկ գիտելիքների ու հմտությունների փոխանցման, ՄԻԵԴ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների ներկայացման, ինչպես նաև ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հարցերը, մասնավորապես՝
  - կորպորատիվ իրավահարաբերությունների առանձնահատկությունները,
  - կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց իրավական վիճակի, նրանց ստեղծման, գործունեության իրականացման և դադարեցման առանձնահատկությունները,
  - կորպորատիվ իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման առանձնահատկությունները,
  - կորպորատիվ իրավահարաբերության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առանձնահատկությունները և այլն.
- մտավոր սեփականության օբյեկտները և դրանց իրավական պաշտպանության առանձնահատկությունները, մասնավորապես՝
  - հեղինակային և հարակից իրավունքների, չբացահայտված տեղեկատվության իրավական պաշտպանության առանձնահատկությունները.
- սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքներ, մասնավորապես՝
  - սեփականության իրավունքի ծագման, փոփոխման և դադարման առանձնահատկությունները,
  - հարևանային իրավունքը,
  - ուրիշի գույքից սահմանափակ օգտվելու իրավունքները,
  - ապահովված իրավունքը և այլն.

- գործարքները, մասնավորապես՝
  - քաղաքացիաիրավական գործարքների վավերության պայմանները.
- ժառանգական իրավունքը, մասնավորապես՝
  - ժառանգության ընդունման ու հրաժարման առանձնահատկությունները,
  - ժառանգության ձևակերպման հետ կապված հարցերը և այլն.
- պարտավորական իրավունքի արդի հարցերը, մասնավորապես՝
  - քաղաքացիաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները պարտավորական իրավունքի ինստիտուտում (տոկոսների հաշվարկման կարգի առանձնահատկությունները),
  - վնաս պատճառելու և անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունները,
  - ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները,
  - ապահովագրության իրավական կարգավորումը քաղաքացիական օրենսդրությամբ.
- միջազգային մասնավոր իրավունքի արդի հարցերը, մասնավորապես՝
  - կոլիզիոն նորմերի կիրառման առանձնահատկությունները,
  - պայմանագրային հարաբերությունների միջազգային մասնավոր-իրավական կարգավորման առանձնահատկությունները,
  - ընտանեկան հարաբերությունները միջազգային մասնավոր իրավունքում և այլն.
- արժեթղթերի իրավական կարգավորման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

11. JC-C-029-19. Քաղաքացիական դատավարության արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քաղաքացիական դատավարության կատարելագործման ուղղությամբ իրականացված բարեփոխումների, ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքում ներդրված ինստիտուտների ուսումնասիրության, դրանց վերաբերյալ տեսական ու գործնական գիտելիքների ու հմտությունների փոխանցման, ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների ներկայացման, ինչպես նաև ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու արդի հացերը,
- ապացուցումը, ապացուցման բեռի բաշխման կանոնները, ապացույցների գնահատման հմտությունները,
- դատաքննության հիմնահարցերը,
- դատական նիստի վարման հմտությունները,
- դատական ծախսերի հաշվարկման ու գանձման առանձնահատկությունները,
- դատավարական ժամկետներն ու դրանց կառավարման մեթոդները,
- հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման և նախնական ապահովման կիրառման առանձնահատկությունները,
- հատուկ հայցային վարույթի առանձնահատկությունները,
- հատուկ վարույթի գործերով քննության առանձնահատկությունները,
- պարզեցված ընթացակարգով գործերի քննության առանձնահատկությունները,

- օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթների առանձնահատկությունները,
- վճռաբեկ և վերաքննիչ դատարաններում վարույթների առանձնահատկությունները,
- օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթի առանձնահատկությունները,
- քաղաքացիական գործերով իրավական օգնության առանձնահատկությունները,
- դատավարության նորմերի կիրառման հետ կապված այլ հիմնահարցեր,
- դատական ակտի մշակման հմտությունները, մասնավորապես՝ դատական վարույթների ընթացքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

12. JC-Q-002-19. Քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, քրեական օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության ու կիրառման արդյունքում բացահայտած թերությունները հաղթահարելու, քրեական իրավունքի տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերի ու ինստիտուտների, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, մասնավորապես՝
  - հանցագործությունների որակման իմացաբանական հիմունքները,
  - ըստ հանցակազմի տարրերի (օբյեկտ, օբյկետիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ) հանցագործությունների որակման առանձնահատկությունները,
  - չավարտված հանցավոր գործունեության և հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում հանցագործությունների որակման հիմնախնդիրները,
  - հանցագործությունների բազմակիության դեպքում հանցագործությունների որակման և եզակի բարդ հանցագործություններից դրանց սահմանազատման հիմնախնդիրները,
  - քրեաիրավական նորմերի մրցակցության (բովանդակային և տեմպորալ) դեպքում հանցագործությունների որակման հիմնախնդիրները,
  - հանցակցությամբ կատարվող հանցագործությունների որակման հիմնախնդիրները, մասնավորապես՝ հանցակիցների տեսակների և հանցակցության ձևերի տարանջատման հիմնահարցերը և հանցակցության ձևերի որակման առանձնահատկությունները, հանցակցի սահմանազանցման, հանցակցի կողմից հանցագործությունից կամովին հրաժարվելու, չհաջողված հանցակցության որակման, հատուկ սուբյեկտով հանցագործությունե-

ում հանցակցության որակման հիմնահարցերը, ինչպես նաև հանցագործության միջնորդավորված կատարման որակման հիմնախնդիրներն ու առնչակցությունը հանցակցությունից սահմանազատելու և որակելու հիմնահարցերը,
  - բլանկետային նորմերով և արժեքավորվող հատկանիշներով հանցագործությունների որակման առանձնահատկությունները.
- արարքի հանցավորությունը, քրեական պատասխանատվությունը և պատիժը բացառող հանգամանքները, պատժի ինստիտուտին և պատիժ նշանակելուն առնչվող հարցերը,
- ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված հանցավոր արարքների (մասնավորապես՝ մարդու կյանքի և առողջության, սեռական ազատության և անձեռնմխելիության, ընտանիքի և երեխայի շահերի, սեփականության, տնտեսական գործունեության (այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը), հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության, մասնավորապես՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, շրջակա միջավայրի անվտանգության, ինչպես նաև պետական իշխանության, պետական ծառայության, կառավարման կարգի և արդարադատության, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների և այլն) ճշգրիտ որակման հիմնահարցերը, հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու հիմնախնդիրները և դրանց լուծման ոլորտում օրենսդրական ու իրավակիրառ փորձը,
- քրեական իրավունքի ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը),
- նշված հարցերի վերաբերյալ քրեական նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացմամբ Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

13. JC-Q-003-19. Քրեական վարույթի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական վարույթի նոր իրավական զարգացումների, քրեական դատավարության օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության ու կիրառման արդյունքում բացահայտված թերությունները հաղթահարելու, քրեական դատավարության տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերի ու ինստիտուտների, ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերի, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը,

- բժշկական բնույթի հարկադրական միջոներ կիրառելու վարույթի հիմնախնդիրները,
- անչափահասների մասնակցությամբ քրեական վարույթի առանձնահատկությունները,
- ապացույցները և ապացուցման գործընթացի հիմնախնդիրները քրեական դատավարությունում,
- քաղաքացիական հայցի լուծման, դատական ծախսերի վերականգնման և իրեղեն ապացույցների տնօրինման հիմնախնդիրները,
- քրեական վարույթում դատական քննության անցկացման հմտությունները, մասնավորապես՝ դատարանի կողմից քրեական գործը վարույթ ընդունելու, գործը դատական քննության նախապատրաստելիս ընդունվող որոշումների, և դատական նիստի նախապատրաստական մասում ծագող գործնական հարցերը, դատաքննության անցկացման ձևին, այդ թվում՝ դատական նիստի ընթացակարգի պահպանմանը, հարցաքննությունների կատարմանը, ապացույցների հետազոտմանը, միջնորդություններին արձագանքմանը, ինչպես նաև դատավճռի կայացմանը վերաբերող գործնական հարցերը,
- իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրները,
- դատական ակտի մշակման հմտությունները, մասնավորապես՝ դատական վարույթների ընթացքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները,
- վերանայման վարույթների առանձնահատկությունները,
- ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնախնդիրները,
- քրեական դատավարության ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքների ապահովման հիմնախնդիրները, դրանց վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները և ՀՀ-ում դրանց կիրառման հիմնահարցերը,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի և դրանց կիրառման առանձնահատկությունների, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքների, ինչպես նաև դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը),
- նշված հարցերի կապակցությամբ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները, քրեական դատավարության սկզբունքների նոր համակարգը, քրեական դատավարության նոր հասկացութային ապարատը, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության նոր կառուցակարգերին վերաբերող հարցերը:

Դասընթացը նախատեսված է քրեաիրավական մասնագիտացմամբ Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

14. JC-A-002-19. Վարչական իրավունքի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է վարչարարության, վարչական վարույթի և վարչական պատասխանատվության ինստիտուտների արդի հարցերի վերաբերյալ դատավորների թեկնածուների հա-

վակնորդների ցուցակում ընդգրկված անձանց գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- վարչարարության հասկացությունը, հատկանիշները, վարչական մարմինների կողմից վարչարարության հիմնարար սկզբունքների պահանջների իրագործման իրավաչափության գնահատման առանձնահատկությունները,
- մաքսային վարչարարության կարգավորման առանձնահատկությունները Եվրասիական տնտեսական միության անդամակցության համատեքստում,
- պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում,
- պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար,
- վարչական վարույթի հասկացությունը և հատկանիշները,
- վարչական վարույթի հարուցման հիմքերը և կարգը,
- վարչական վարութային գործողությունների առանձնահատկությունները,
- վարչական վարույթի կասեցման և կարճման հիմքերը և կարգը,
- վարչական ակտի հասկացությունը և տեսակները, վարչական ակտ ընդունելը, դրա մասին իրազեկելը, վարչական ակտի ուժի մեջ մտնելը,
- առ ոչինչ վարչական ակտը, վարչական ակտն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքերը, կարգը և հետևանքները,
- անբողոքարկելի վարչական ակտերի կատարման հիմնախնդիրները,
- կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվելուց հետո կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու առանձնահատկությունները,
- հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների ստուգման առանձնահատկությունները,
- կոնվենցիոն հիմքերից դուրս փախստականի կարգավիճակի տրամադրման առանձնահատկությունները,
- վարչական պատասխանատվության բնութագիրը,
- վարչական պատասխանատվությունը բացառող, ծանրացնող և մեղմացնող հանգամանքների գնահատման առանձնահատկությունները,
- վարչական հարկադրանքի հասկացությունը և տեսակները,
- վարչական տույժի տեսակները, տույժ նշանակելու կանոններն ու ժամկետները,
- վարչական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները,
- վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները,
- վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի ապահովման միջոցների կիրառման իրավաչափության որոշման առանձնահատկությունները,
- վարչական օրենսդրության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշումները,

Դասընթացը նախատեսված է վարչական մասնագիտացմամբ Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

15. JC-A-012-19. Վարչական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է վարչական դատավարության ընթացքում ծագող հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը և դրա իրացման առանձնահատկությունները դատավարության առանձին փուլերում,
- ապացույցները և ապացուցումը վարչական դատավարությունում, կողմերի ապացուցման բեռը կրելու սահմանը՝ գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի պարտականության համատեքստում,
- դատարանի կողմից անհրաժեշտ ճանաչված «այլ ծախսերի տեսակները»՝ որպես դատական ծախսերի բաղկացուցիչ,
- հայցերի դասակարգման հիմնախնդիրները վարչական դատավարությունում,
- վարչական գործերով հայցադիմումը վարույթ ընդունելը, վերադարձնելը, վերահասցեագրելը, ընդունումը մերժելը,
- այլևս իրավաբանական ուժ չունեցող վարչական ակտի կամ սպառված գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելը ճանաչելու հայցի ընդունման և քննության առանձնահատկությունները,
- վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկման հայց ներկայացնելու դեպքում դատավարական ժամկետների հաշվարկման առանձնահատկությունները,
- հատուկ վարույթի գործերի քննության առանձնահատկությունները,
- վճռաբեկ և վերաքննիչ դատարաններում վարույթների առանձնահատկությունները,
- վարչական դատավարական օրենսդրության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշումները,
- վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները,
- վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները:
- դատական ակտի մշակման հմտությունները, մասնավորապես՝ դատական վարույթների ընթացքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները,

Դասընթացը նախատեսված է վարչական մասնագիտացմամբ Ունկնդիրների մասնագիտական պատրաստման համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

Նիստը նախագահող **Հ. Ասատրյան**